ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան

Ամասիա Հայկազունի

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

Ամասիա Հայկազունի (ծննդյան թվականն անհայտ - մ.թ.ա. 1908, Արմավիր), Հայոց նահապետ արքա մ.թ.ա. 1940 - մ.թ.ա. 1908 թվականներին, Արամայիս Հայկազունու որդին, Արամանյակ Հայկազունու թոռը, Հայկ նահապետի ծոռը, Շարա Հայկազունու և Եբասան Հայկազունու եղբայրը, Հայկազունիների արքայական տոհմից: Ամասիա Հայկազունի ուներ երեք որդի՝ Գեղամ Հայկազունի, Փառոխ Հայկազունի և Ցոլակ Հայկազունի:

Ամասիան ժառանգում է հորից արգավանդ դաշտավայրը և Արմավիր քաղաքը: Ունենալով իր երեք որդիներին, նա անցնում է Երասխ գետը և հարավային լեռան ստորոտին կառուցում երկու բնակավայր՝ Փառիխտա և Ցոլակերտ, որտեղ բնակեցնում է իր երկու փոքր որդիներին՝ Փառոխին ու Ցոլակին: Բարձր հարավային լեռը նրա անունով կոչվում է Մասիս: Կյանքի մնացած տարիները անցկացնում է Արմավիրում: Ամասիային հաջորդում է ավագ որդին՝ Գեղամ Հայկազունին:

Ամասիա Հայկազունի	
Հայոց նահապետ արքա	
Իշխանություն	մ.թ.ա. 1940 – մ.թ.ա. 1908
Թագադրում	մ.թ.ա. 1940
Մահացել է՝	մ.թ.ա. 1908
Վախճանի վայր	Արմավիր
Ազգություն	Հայ
Նախորդ	Արամայիս Հայկազունի
Հաջորդող	Գեղամ Հայկազունի
Տոհմ	Հայկազունիներ
Հայր	Արամայիս Հայկազունի
Երեխաներ	Գեղամ Հայկազունի, Փառոխ Հայկազունի, Ցոլակ Հայկազունի

Աղբյուրներ

- «Հայոց անձնանուններ բառարան», Հրաչեայ Աճառեան, Երեւան, 1942, Հատոր 1, Յուցակ 1, էջ 115
- «Հայոց Պատմություն», Մովսես Խորենացի, 1961, Երևան, Գլուխ Ա. Ե, ժբ
- «Պատմութիւն», Սեբէոս Բագրատունի, Ա. էջ 3, 5
- «Պատմութիւն Հայոց», Ուխտանես, Ա. է, ժզ
- «Պատմութիւն Ադուանից», Մովսես Կաղանկատվացի, 1860, Փարիզ, հրատ.՝ Կարապետ Շահնազարյան, Հատոր Ա. ժե (Արմայիսա)
- «Պատմութիւն», Վարդան Արևելցի, է
- «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յարդազ գիւտի ժամանակաց անցելոց միինչեւ ի ներկայս», Սամուել Անեցի, Գ

Դ·Ք·Խ (https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%82%D5%B6%D5%A5%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80&action=edit) [Բացել]
Դ·Ք·Խ (https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%AB%D5%B6_%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B6_%D5%A4%D5%AB%D6%81%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6&action=edit) [Բացել]

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Ամասիա_Հայկազունի&oldid=7732417» էջից